ո՞վ է իմանում, Կարօն է, տեսնես ինչ քամի է փչել քթին, թողել է մեզ, եւ մի որեւէ ծակուծուկ մտել է: Բայց յետոյ անցքը ինձ շատ ծանր երեւաց: Կարօն այնքան անխոհեմ չէր, որ առանց իմացում տալու հեռանար քաղաքից: Մստեր Ֆիշերը զարմանքով լսեց, երբ բոլորը պատմեցի նրան: Յետոյ աջ ձեռքը թափ տոեց, զարկեց սեղանին, ասելով. — «մի բան կա... գրաւ կը բռնեմ, եթէ այնպէս չլինի»... — «ի՞նչ բան, ասացէք խնդրեմ, ես նրա մասին շատ անհանգիստ եմ»: Ծերունին այդքանը միայն ասաց, թէ վերջին ժամանակներում նկատում էր, որ նա մտնում էր զանազան շրջաններ, — ի՞նչ շրջաններ, — այդ մասին նա ոչինչ չխօսեց, միայն աւելացրեց. — «թէեւ ցաւալի է, բայց նրա ձգտումներն ազնիւ են»... Այդ մթին խօսքերով ծերունին աւելի սաստկացրեց իմ անհանգստութիւնը, ես թողեցի նրան եւ վազեցի Սագօյի մօտ: Նա շոաբած մնաց, երբ լսեց այդ անցքը: Նա նոյնպէս ոչինչ չգիտէր, միայն այդքանը ասաց, թէ վերջին ժամանակներում խիստ սակաւ էր տեսնում Կարօյին, եւ միշտ ինչ-որ մտատանջութեան մէջ էր գտնում: Ես սկսեցի զանազան տարակուսանքների մէջ ընկնել: Անցաւ մի ամիս, երկու ամիս եւ մի ամբողջ տարի, նրանից ոչինչ լուր չունէինք: Մենք ամէնքս նրան կորած էինք համարում: Հանգիստ էր միայն մստեր Ֆիշերը: Յանկարծ նրանից մի նամակ եմ ստանում: Ի՞նչ էք կարծում, որտեղի՞ց, Հարաւային Ամերիկայից: Նա անթիւ ներողութիւններ էր խնդրում, որ, առանց մեզ յայտնելու, հեռացաւ մեզանից: Այդ նամակը խիստ ուրախալի տպաւորութիւն գործեց իմ վրայ: Բանից դուրս եկաւ, որ նա գնացել էր այնտեղ տեղային ագարակները ուսումնասիրելու եւ տեղային բանորների դրութիւնը հետազօտելու: Որքա՜ն ուրախ էր նա իր նամակի մէջ. գրում էր, թէ մի հարուստ կալոածատիրոջ դաստակերտում կառավարչի պաշտօն էր ստացել, իր ձեռքի տակ աշխատում էին մի քանի հարիւր բանորներ: Երբ այդ մասին յայտնեցի մստեր Ֆիշերին, նա իր սովորական բարի ժպիտը երեսին ասաց. «Կարօն ուզում էր ամէն բան սովորել, ամէն բան փորձել, ասելով, թէ իր հայրենիքին պէտք են»:

— Չգիտեմ, Սագօն նամակ ստացե՞լ էր Կարօյից, թէ ոչ, բայց ես նրան ոչինչ չասացի իմ ստացած նամակի մասին: Միայն նկատում էի, որ նա էլ, ինչպէս ասում են, իր խելքումը չէր: Անդադար ճանապարհորդութիւններ էր անում, շատ անգամ շաբաթներով բացակայ էր գտնւում Նիւ-Եօրքից: «այդ որտե՞ղ ես թափառում», — մի անգամ հարցրի նրանից: «ես Ամերիկայի գաղթականների կեանքն եմ ուսումնասիրումէ, — պատասխանեց նա: «այդ մասին հարիւրաւոր գրքեր կան, կարող ես կարդալէ, — նկատեցի ես: «Գրքի մէջ գրածի եւ աչքով տեսածի մէջ մեծ զանազանութիւն կայ», — ասաց նա: «Վերջապէս ի՞նչ նպատակ կայ դրանում», — հարցրի ես, փոքր-ինչ վիրաւորելով